



«Պատմության մրցույթներ Հայաստանում, Բելառուսում, Վրաստանում, Մոլդովայում և Ուկրաինայում 3.0» ծրագիր

Ուղեցույց մասնակից ուսուցիչների համար

Բովանդակություն

Ծրագրի հակիրճ նկարագրություն 2

Ծրագրի գործողություններ ուսուցիչների և աշակերտների համար..... 3

 Վերապատրաստում 3

 Հետազոտական նախագծի պլան 3

 Վերապատրաստման դասընթացների մասնակից ուսուցիչների կողմից աշակերտական խմբերի ձևավորում, հետազոտական նախագծերի իրականացում և մրցույթին նախապատրաստում 4

 Կիրառելի ձևաչափերի և գործիքների ներկայացում 5

 Հետազոտական նախագծի պլանի կատարողական և մասնակցություն 2022թ. ձմեռային/գարնանային դպրոցին..... 5

 Պատմության մրցույթի հայտարարում, աշակերտական խմբերի կողմից աշխատանքների ներկայացում, մասնագիտական ժյուրիի կողմից աշխատանքների գնահատում և հաղթողների ընտրություն 6

Supported by





Ծրագրի հակիրճ նկարագրություն

Իրականացնող կազմակերպություն՝ Դի-Վի-Վի Ինթերնեյշնալ

Գործընկեր կազմակերպություններ՝ «Հազարաշեն ազգաբանական հետազոտությունների կենտրոն» ՀԿ, «Պարադիգմա» կրթական հիմնադրամ

Վայր՝ Երևան, Շիրակ, Տավուշ

Ժամանակահատված՝ Մայիս 2021 – դեկտեմբեր 2022

«Պատմության մրցույթներ Հայաստանում, Բելառուսում, Վրաստանում, Մոլդովայում և Ուկրաինայում 3.0» ծրագիրն իրականացվում է Դի-Վի-Վի Ինթերնեյշնալի՝ Հայաստանի, Բելառուսի, Վրաստանի, Մոլդովայի և Ուկրաինայի գրասենյակների կողմից Գերմանիայի Քյոլն քաղաքում հիմնադրամի հետ համատեղ՝ Գերմանիայի արտաքին գործերի նախարարության ֆինանսական աջակցությամբ:

«Պատմության մրցույթներ» նախաձեռնությունը մեկնարկել է 2001թ. EUSTORY ոչ ֆորմալ ցանցի կողմից: Ցանցը ստեղծվել է Գերմանիայում Քյոլն քաղաքում հիմնադրամի կողմից և միավորում է ավելի քան 20 երկրների 30 քաղաքացիական հասարակության կազմակերպություններ: 2001թ.-ից ի վեր անցկացվել են շուրջ 22 մրցույթ, որոնց մասնակցել են ավելի քան 230.000 երիտասարդներ ողջ Եվրոպայից:

Ծրագրի նպատակն է հանրակրթական դպրոցների աշակերտների շրջանում պատմություն առարկայից քննադատական մտածողության զարգացումը՝ նախագծային ուսուցման և դասավանդման ու ուսումնառության նոր մեթոդների և ռազմավարությունների ներդրման միջոցով: Այս մոտեցմամբ ***մասնակիցները ինքնուրույն ուսումնասիրում են իրենց միջավայրի պատմությունը՝ տեղեկատվություն ստացողի դերից:***

Ծրագրի մասնակից բոլոր 5 երկրների համար այս փուլի ընդհանրական թեման է «Մեր ժամանակահատվածի կարտատարադձության միջև. Խորհրդային և հետխորհրդային շրջանի պատմությունը ընտանիքներում և տեղական համայնքներում»՝ ի նշանավորումն ԽՍՀՄ փլուզման 30-ամյակի, իսկ Հայաստանի ազգային թեման է՝ «Մոռանալու և հիշելու միջև. Խորհրդային և հետխորհրդային հիշողության լանդշաֆտը համայնքներում և ընտանիքներում»:

Supported by





Ծրագրի գործողություններ ուսուցիչների և աշակերտների համար

Ծրագրի շրջանակներում նախատեսվում են հետևյալ հիմնական գործողությունները ուսուցիչների համար.

Վերապատրաստում

Երևանի, Շիրակի և Տավուշի մարզերի հանրակրթական դպրոցների 9-րդ դասարանում «Հայոց պատմություն», «Համաշխարհային պատմություն», «Հայ եկեղեցու պատմություն» առարկաները դասավանդող ուսուցիչների վերապատրաստում պատմություն առարկայի դասավանդման նոր մեթոդների և ռազմավարությունների վերաբերյալ (հոկտեմբեր – նոյեմբեր, 2021թ.)

Դասընթացի թեմաներ և տևողություն «Բանավոր և տեղական պատմության մեթոդներ», **3 օր դեմատղեմ**

Դասընթացը երաշխավորված է որպես ատեստավորման ենթակա ուսուցիչների վերապատրաստման դասընթաց ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2021թ. մայիսի 18-ի N 780-Ա/2 հրամանով և կներդրվի 2022 թվականից:

«Ակտիվ պատմական մտածողության ռազմավարություններ»

1 օր առցանց

Դասընթացներին մասնակցության բոլոր ծախսերը, այդ թվում՝ տրանսպորտ, գիշերակաց, սնունդ և այլն, հոգում են ծրագրի կազմակերպիչները:

Դասընթացի ավարտից հետո Դի-Վի-Վի Ինթերնեյշնալի կողմից ծրագրի մասնակից ուսուցիչներին կտրամադրվեն գրենական պիտույքների փաթեթներ՝ ծրագրի շրջանակներում աշակերտական խմբերի հետ հետազոտական աշխատանքներ իրականացնելու համար:

Հետազոտական նախագծի պլան

Վերապատրաստման ավարտին բոլոր մասնակից ուսուցիչները (դասընթացավարների օգնությամբ) կկազմեն **հետազոտական նախագծի պլանի** նախնական տարբերակը, որը մեկ շաբաթվա ընթացքում կներկայացնեն դասընթացավարներին: Փաստաթուղթը կվերանայվի դասընթացավարների կողմից, կարվեն համապատասխան մեկնաբանություններ, որոնց հիման վրա այն կլրամշակվի և վերջնական տարբերակը հաջորդ մեկ շաբաթվա ընթացքում կներկայացվի դասընթացավարներին և ծրագրային թիմին՝ հետևյալ հասցեներով՝

Լուսինե Խառատյան
Ռուզաննա Ծատուրյան

lusine.kharatyan@gmail.com
ruzantsaturyan@yahoo.com

Supported by





Տաթև Ասրյան

asryan@dvv-international.am

Հետազոտական նախագծի **լավագույն** պլանները կտեղադրվեն ծրագրի կայքէջում որպես ռեսուրս ծրագրի մասնակից և այլ ուսուցիչների համար: **Լավագույն պլանների ընտրությունը կատարվելու է հետևյալ չափանիշների հիման վրա.**

1. Հետազոտական նախագծի համապատասխանությունը ծրագրի ընդհանուր թեմային:
2. Պլանի հստակությունը, պարզությունը, տրամադրված ձևաչափի բոլոր բաղադրիչների առկայությունը:
3. Աշակերտական խմբի ընտրության/ներգրավման մոտեցումները:

Հետազոտական նախագծի այն պլանները, որոնք լավագույնս կհամապատասխանեն այս չափանիշներին, կարող են հավակնել տեղադրվելու ծրագրի կայքէջում, որի դիմաց ուսուցիչները կստանան համապատասխան փոխհատուցում:

Ընտրությունը կատարվելու է դասընթացավարների և ծրագրային թիմի կողմից:

Վերապատրաստման դասընթացների մասնակից ուսուցիչների կողմից աշակերտական խմբերի ձևավորում, հետազոտական նախագծերի իրականացում և մրցույթին նախապատրաստում

Հետազոտական պլանների հաստատումից հետո ուսուցիչները ձևավորում են **նվագագույնը 5 աշակերտից բաղկացած թիմեր**՝ ըստ պլանում ներկայացված մոտեցման: Աշակերտական խմբի կազմում կարող են ներգրավվել 9-12-րդ դասարանի աշակերտներ: Ընտրության կարևոր չափանիշ է Խորհրդային Միության պատմությանը ծանոթ լինելը: Հիմնական դպրոցներում հնարավոր է ներգրավել միայն 9-րդ դասարանցիներին:

Աշակերտական խումբը կունենա **շուրջ 2 ամիս** հետազոտական նախագծի վրա աշխատելու համար: Փետրվար-մարտ ամիսներին աշակերտական խմբերը ուսուցիչների ուղղորդմամբ կսկսեն իրականացնել հետազոտական նախագծերը՝ ըստ ներկայացված պլանների: Աշակերտական խմբերի ներգրավման մոտեցումները կազմում են այդ պլանի կարևորագույն մասը: Ուսուցիչները պետք է խմբի անդամների մասնակցության հստակ մոտեցումներ ունենան՝ հնարավորություն ստեղծելով թե՛ խմբային, և թե՛ անհատական աշխատանքի համար:

Աշակերտները պետք է ի սկզբանե տեղեկացված լինեն, որ արդյունքում իրենցից ակնկալվում է ներկայացնել արված հետազոտության մասին պատմող որևէ նյութ՝ շարադրություն, պատատառ,

Supported by





տեսաֆիլմ, փողոցային, այլ: Աշակերտներից յուրաքանչյուրը կարող է ներկայացնել անհատական աշխատանք: Այդուհանդերձ, ցանկության դեպքում, խումբը կարող է ներկայացնել նաև համատեղ աշխատանք:

Աշակերտական խմբի ձևավորման և կազմի մասին անհրաժեշտ է տեղեկացնել դասընթացավարներին և ծրագիրն իրականացնողներին՝ էլեկտրոնային նամակ գրելով հետևյալ հասցեներով.

Լուսինե Խառատյան
Ռուզաննա Ծատուրյան
Տաթև Ասրյան

lusine.kharatyan@gmail.com
ruzantsaturyan@yahoo.com
asryan@dvv-international.am

Էլ. նամակի թեմայի մասում հարկ է նշել «Աշակերտական խմբի կազմ», իսկ հիմնական տեքստում նշել, թե որ մարզի, որ դպրոցի խումբն է ներկայացվում տվյալ ուսուցչի կողմից, որին կհաջորդի աշակերտների ցանկը:

Կիրառելի ձևաչափերի և գործիքների ներկայացում

Աշակերտական խմբերի կազմավորումից հետո / 2022թ. հունվար ամսի երկրորդ կեսին/ կիրականացվի առցանց հանդիպում խմբերի և ուսուցիչների համար, որտեղ կներկայացվեն այն հնարավոր գործիքներն ու ձևաչափերը, որոնք կարող են կիրառվել հետազոտության արդյունքները ներկայացնելու համար: Այդ գործիքների ու ձևաչափերի շարքում կարող են լինել ֆոտոարխիվը, հարցազրույցների ամփոփումը/վերլուծությունը, պաստառը, տեսանյութը և այլն:

Հետազոտական նախագծի պլանի կատարողական և մասնակցություն 2022թ. ձմեռային/գարնանային դպրոցին

2022թ. փետրվարի վերջին-մարտի սկզբին, այն է հետազոտական նախագծի կեսին, ուսուցիչներին կառաջարկվի ներկայացնել հետազոտական պլանի կատարողականը: Սա նշանակում է, որ պլանի յուրաքանչյուր կետի համար ուսուցիչները պետք է ներկայացնեն արված աշխատանքները, ընթացքը, աշակերտական խմբի ներգրավվածության մասին դիտարկումներ և այլն:

Կատարողականի ներկայացման ձևաչափը կներկայացվի առանձին:

Հիմնվելով կատարողականի ընթացքի, բովանդակության և աշակերտների ներգրավվածության վրա՝ ծրագրային թիմը որոշում կկայացնի ձմեռային/գարնանային դպրոցին խմբերի և ուսուցիչների մասնակցության վերաբերյալ:

Supported by



Պլանավորվում է դպրոցն անցկացնել մարտի կեսերից մարտի վերջն ընկած ժամանակահատվածում, Երևանում կամ Ծաղկաձորում: Դպրոցը կտևի 2-3 օր և կկարևորի հետևյալը.

- Փորձի փոխանակում ուսուցիչների միջև
- Փորձի փոխանակում աշակերտների միջև
- Հետազոտության արդյունքների ներկայացման գործիքների և ձևաչափերի քննարկում
- Նախապատրաստում «Պատմության մրցույթի» հայտարարմանը:

Պատմության մրցույթի հայտարարում, աշակերտական խմբերի կողմից աշխատանքների ներկայացում, մասնագիտական ժյուրիի կողմից աշխատանքների գնահատում և հաղթողների ընտրություն

Նախատեսվում է, որ մրցույթի մասին կհայտարարվի մարտի կեսերին:

Ապրիլի 1-30 ծրագրային կայքը բաց կլինի աշակերտների աշխատանքները ներբեռնելու համար: Ինչպես նշվել է, աշակերտական խմբի յուրաքանչյուր անդամ կարող է մրցույթին ներկայացնել հետազոտական նախագծից բխող իր աշխատանքը: Այդուհանդերձ, ցանկության դեպքում, խումբը կարող է ներկայացնել նաև համատեղ աշխատանք:

Մրցույթին ներկայացված աշխատանքների գնահատման համար կգործի ծրագրի իրականացնողներից, փորձագետներից և դասընթացավարներից կազմված մասնագիտական ժյուրի: Աշխատանքները կգնահատվեն հետևյալ չափանիշների հիման վրա.

- Աշխատանքը ամբողջականորեն ներկայացնում է ընտրված թեմայի շրջանակներում կատարված հետազոտական նախագիծը – **առավելագույնը 10 միավոր:**
- Հետազոտության համար ընտրված ձևաչափը լավագույնս է արտացոլում նախագծի բովանդակությունը - **առավելագույնը 5 միավոր:**
- Աշխատանքի հիմքում ընկած հետազոտական մասը տեսանելի է, հիմնավոր, հավաստի աղբյուրների վրա հիմնված – **առավելագույնը 7.5 միավոր:**
- Հետազոտական նախագծի արդյունքները ներկայացված են կրեատիվ/ստեղծագործ մոտեցումներով - **առավելագույնը 7,5 միավոր:**
- Աշխատանքը կատարվել է ինքնուրույն, առկա է բազմակողմանի, վերլուծական մոտեցում- **առավելագույնը 10 միավոր:**

Նախատեսվում է ունենալ 12 մրցանակ, այդ թվում.

<i>Մրցանակի տեսակը</i>	<i>Նկարագրություն</i>
Գլխավոր մրցանակ աշակերտի/աշակերտական խմբի աշխատանքի համար (1)	Աշխատանքը համապատասխանում է մրցույթի համար սահմանված բոլոր չափանիշներին և ստացել է առավելագույն միավոր:
Աշակերտական խմբի հետ ամենաարդյունավետ աշխատած ուսուցիչ (3-5 մրցանակ ըստ տարածքի՝ Շիրակ, Տավուշ, Երևան)	Հիմնվելով հետազոտական պլանի կատարողականի և աշակերտների կողմից ներկայացված աշխատանքների քանակի և որակի վրա՝ կընտրվեն համապատասխան ուսուցիչները:
Լավագույն հետազոտական աշխատանք (1-2)	Աշխատանքի հիմքում ընկած հետազոտական մասը տեսանելի է, հիմնավոր, հավաստի աղբյուրների վրա հիմնված:
Ամենակրեատիվ աշխատանք (1-2)	Հետազոտական նախագծի արդյունքները ներկայացված են կրեատիվ/ստեղծագործ այնպիսի մոտեցումներով, որ լավագույնս են ներկայացնում այն:
Աշակերտական խմբի կողմից ներկայացված համատեղ լավագույն աշխատանք (1-2)	Համատեղ ներկայացված աշխատանքն ամբողջական է, հստակ ու հասկանալի, արտացոլում է աշակերտական խմբի բոլոր անդամների ներդրումը:

Նախատեսվում է, որ գլխավոր մրցանակ ստացող աշակերտը և իր ուսուցիչը հնարավորություն կունենան մասնակցելու 2022թ. տարեվերջին Գերմանիայում կայանալիք «Պատմության ճամբարին»: **ՔՈՎԻԴ-19-ով պայմանավորված խնդիրների դեպքում, միջոցառումը կանցկացվի առցանց, իսկ գլխավոր մրցանակը կփոխարինվի:**

Մյուս մրցանակները կլինեն նվերների, հուշանվերների տեսքով:

Աշակերտների աշխատանքները կիրառարակվեն հատուկ ծրագրի համար ստեղծված կայքում, իսկ լավագույն աշխատանքները կտպագրվեն առանձին գրքույկով:

Ժամանակացույց

1. Ուսուցիչների վերապատրաստում	Հոկտեմբեր – Նոյեմբեր, 2021
2. Հետազոտական պլանների ներկայացում	Նոյեմբեր – դեկտեմբեր, 2021
3. Աշակերտական խմբերի ձևավորում	Դեկտեմբեր, 2021
4. Առցանց տեղեկատվական հանդիպում ուսուցիչների և աշակերտների համար	Հունվար, 2022
5. Հետազոտական աշխատանքների իրականացում	Փետրվար – մարտ, 2022
6. Հետազոտական պլանի կատարողականի ներկայացում	Մարտ, 2022
7. Ձմեռային դպրոց	Մարտ, 2022
8. Մրցույթի հայտարարում	Մարտի կես, 2022
9. Մրցույթի շրջանակում հետազոտական աշխատանքների արդյունքների ներկայացում	Ապրիլ 30, 2022
10. Մրցույթի ամփոփում, մրցանակաբաշխություն	Մայիս, 2022
11. «Պատմության մրցույթներ» ճամբար	Նոյեմբեր, 2022